

# ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

## I Արտիստիկական թատրոն

«Արլեզիէն» Դողէի. ժողովուրդը Դողէի երկերում:—Բրիտի «Պարմիր պատմութեան» դատաստանական բարձրը. անհատը և հասարակութիւնը. սկեպտիցիզմ:—«Կեանք» Պոտապենկօի և Սերգիենկօի. փոքր և մեծ կեանքը. կանացի պատիւը և հասարակութիւնը. անհատական հասկացողութիւնների և հասարակական սովորութիւնների ընդհարումը. սովորութիւնների ընկուցիւնը. մեծ լուծութիւնը որպէս իրական կեանք. անհատը և ստրկացած:—«Մարտող ճրագներ» Ա. Արեւեանի. սխալ ըմբռնուած տիպեր:

Անցեալ հոկտեմբերի 26-ին հայոց դրամատիկական ընկերութեան խումբը ցերեկով ներկայացրեց Դողէի Արլեզիէն դրաման: Ֆրանսիական ականաւոր հեղինակի այս գործը նրա երկասիրութիւնների ամբողջութեան մէջ մի առանձին տեղ զբաւում ոչ այնքան իր գրական արժանաւորութիւններով, որքան իր նիւթով: Դողէն իր այս երկի մէջ պատկերացրել է Ֆրանսիական ժողովրդական բարձրը, սովորութիւնները, հաւատալիքները: Արլեզիէնը, Իմջրագացի նամակները և Տարասկոնցի Տարտարէնը համարեա մի ամբողջութիւն են կազմում. նրանք լաւ ապացոյց են, որ հեղինակը գաւառական ծագում ունի, ժողովրդի մարդ է, նրա հոգուն ծանօթ: Դողէն Ֆրանսիայի հարաւից էր և ընկնելով Պարիզ՝ իր հետ բերեց այն բոլորը, ինչ հարաւի ժողովրդներին այնպէս յատուկ է—հոգու ջերմութիւն, վառ երեակայութիւն, գրաւիչ պարզութիւն, սէր դէպի բնութիւնը: Այս բոլորը նրանում այնպէս էին շեշտուած, որ Դողէն իր նոր միջավայրում երբէք չը կարողացաւ ամբողջապէս պարիզեցի դառնալ: Նրա բոլոր երկերում որնէ ձեռով ժողովրդի մարդը հանդէս է գալիս իր հոգեկան և ֆիզիկական

ընորոշ յատկութիւնների ամբողջութեամբ: Դողէի տաղանդի խոշոր արժանիքը հէնց այդ ժողովրդական տիպերի նկարագրութեան մէջ արտայայտուեց: Նատուրալիստ դպրոցին պատկանելով՝ նա մնաց միշտ ժողովրդական հողի վրայ: Փրանսիական քիչ գրող կայ, որ իր երկերում այնքան տեղ տուած լինի ժողովրդական կեանքին, յուսահատօրէն տքնող, չարչարուող մարդու ցաւերին, որքան Դողէն:

Մեծ քաղաքներում էլ, ինչպէս Պարիզում և Լիօնում, նա մնաց նոյն ժողովրդի մարդը, նոյն գաւառացին և միշտ մի տեսակ ինստինկտով փնտրեց իր հոգուն ընտանի պատկերներ: Այստեղ էլ նա խառնուեց բազմաշխատ, աղմկալի, աշխատաւոր թաղերի մութ ազգաբնակութեանը և վառ գոյներով նկարագրեց տառապող, քրտնաթոր մարդի յոյսերն ու յուսախաբութիւնները: Եւ նրա բոլոր երկերի մէջ ընթերցողն զգում է, որ Դողէն տալիս է ոչ միայն տեսած, այլ մանաւանդ ցաւով ապրած կեանքի տխուր երեւոյթները: Նոյն գիծն է նկատուում նաև նրա Արլեզիէնի մէջ:

Այս պիեսան ֆրանսիական գիւղն է, որ ինչպէս ամեն երկրի գիւղ՝ խառնուած է մեծ ընութեան հետ, կպած է իր հողին, վախենում է երկնքից և իր մասնաւոր թէ հանրային կեանքի բարօրութիւնն այնտեղից սպասում: Նախապաշարմունքներ ունի, սիրում է գերբնականը, այնտեղ դեռ հովիւր (Բալթագար) իմաստուն է, որովհետև անքուն գիշերներին դիտում է աստղերի ընթացքը և խաղաղութեան ու ընութեան ծոցում խորհում է մութ, անյայտ բաների մասին: Այնտեղ նաւային ստորին պաշտօնեան (պատրոն Մարկ) խոշոր մեծութիւն է իր համազգեստով, աշխատաւոր մարդի (Փրանս Մամայի) դուռը բաց է օտարականի առաջ մի բաժակ գինի խմելու համար: Այստեղ գիւղը դեռ իր պաշտպան սուրբն ունի, ժողովուրդը տօներին պարում է՝ ս. Եղիայի հովանին հայցելով:

Ահա այս նահապետական գեղջուկ միջավայրում կատարւում է մի սիրային դրամա, որի հերոսն է երիտասարդ Փրիզերին, Ռոզ և Փրանս Մամայի որդին: Եւ այդ սէրը իր արտայայտութիւնների մէջ թէև բուռն է, որպէս հարաւի ընութեան նշան, բայց էլի գեղջուկ է: Փրիզերին սիրում է Արլեզիէնին յուսահատօրէն, ծնողները կանխատեսում են մի տրագիկական վախճան, նրանք կը կամենային իրանց որդուն յետ կասեցնել ճակատագրական դժբախտութիւնից, ուր մղում է նրբան իր սէրը: Ահա մէջ են ընկնում հարևանները, խորհրդածութիւններ, խելացի խրատներ, օգնութեան գանաղան իմաստուն փորձեր, չէ՞ որ գիւղը մի ընտանիք է: Սիրոյ ցաւը սիրով կը

բժշկուի, մայրն այդ գիտէ, նա կ'ուզէր, որ իր որդին Վիվե-տին սիրէր, այն փոքրիկ գեղջուկ աղջկան, որի սիրտը կպած է Ֆրիդերին, և որին նահապետական դաստիարակութիւնը հնար չի տալիս լեզուն բանալ, խօսել, արտայայտել իր հոգու յոյզերը: Նրան սովորեցնում են սիրոյ արուեստը, դասեր են տալիս, աղջիկն անկարող է, փորձում է, բայց անկարող է: Ֆրիդերին չի բժշկուում և վերջ է տալիս իր կեանքին:

Այս բոլորը Դոդէն պատմել է իրան յատուկ միանգամայն օբեկտիւ, պարզ, հմայիչ ոճով, նկարագրելու այն աննրման կարողութեամբ, որ նրան է միայն պատկանում: Դիտաւորեալ մորալ՝ չը կայ այստեղ, հեղինակը կանխամտածուած ծրագիր չ'ունի, որ իր ընթերցողին այս կամ այն բանը մտածել տայ շնորհիւ գործող անձանց արտայայտած մտքերի, նրանց արարքների: Պատկերի ամբողջութիւնը ոմանց կարող է թւալ հետաքրքիր, ոմանց պարզապէս տխուր և ուրիշներին միայն օրիգինալ, որպէս արտայայտութիւն մի առանձին կեանքի: Հեղինակի փոյթը չէ, նա կարծես հէնց այնպէս՝ ընթերցողի հետ անցնում է գիւղով առանց իր կողմից մի բառ ասելու այդ խեղճ աշխարհի մասին, ուր մարդկային բոլոր յոյզերը կան, և՛ ցաւ ու խնդութիւն, և՛ ծիծաղ ու արցունք, և ուր ոչ ոք չի մտածում այդ բոլորը փոել, ցոյց տալ: Կեանք է, ապրուում է և անցնում: Հնազանդ գիւղն է այն:

Ահա թէ ինչու Արլեզիէնը որպէս գրաւիչ իդիլիա վաղուց է Փրանսիական բեմի վրայ, և այնտեղ հասարակութիւնը չի ձանձրանում նրանից, մանաւանդ որ յատկապէս այդ պիեսայի համար գրուած կայ մի շատ օրիգինալ, շատ դուրեկան երաժշտութիւն:

Ափսոս որ այդ գեղեցիկ գործի հայերէն ներկայացումը հոկտեմբերի 26-ին անցաւ ծայրէիծայր տաղտուկ: Թւում էր, թէ այդ խաղի ժամանակ ամենքն էլ ձանձրանում են, հասարակութիւնն իր տեղում, իսկ դերասանները բեմի վրայ: Վերջիններից չը կար մէկը, որ իր դերը առհարկի, յոգնած ձևով կատարելիս չը լինէր: Այդ օրն օտար կեանքը չը հասկացուեց հայ բեմի վրայ, իսկ չը հասկացուած կեանքը վերապրել անհնարին է:

\* \*  
\*

Հոկտեմբերի 30-ին խաղացուեց Փրանսիացի թատերագիր Բրիօի «Կարմիր համազգեստը», որ աւելի ճիշտ կը լինէր թարգմանել՝ «Կարմիր պատուճան»—La robe rouge: Այս թատե-

րական գործը ժամանակին բաւական աղմուկ հանեց և արժանացաւ իսկ ֆրանսիական ակադեմիայի մրցանակին: Կարծում ենք, որ այդ յաջողութիւնը վերագրելի է աւելի շուտ այս պիեսայի բովանդակութեանը, քան թէ բեմական-գեղարուեստական արժանաւորութիւններին:

Բրիտն իր «Կարմիր պատմութեան» նիւթը վերցրել է ֆրանսիական դատաստանական կարգերից և շոշափել է այնպիսի բարոյական-հասարակական հարցեր, որոնք մենակ բաւական էին արդէն ընդհանուր և շատ հասկանալի ուշադրութեան առարկայ դարձնելուն: Եթէ հաւատանք Բրիտին, ֆրանսիական ժամանակակից դատական կարգերը շատ հեռու են արդարութեան և ճշմարտութեան սկզբունքներից: Մարդիկ, որոնց հասարակական ներկայ կազմակերպութիւնը հաւատում է արդարադատութեան գործի գերագոյն, նուիրական պաշտօնները, ոչնչով չեն տարբերուում կեանքի տիւրը իրականութեան մէջ մութ, անպատիւ շահատակութիւնների հետամուտ եղող արարածներից: Անհատի և ընկերութեան յարաբերութեան վերայ հսկողները, իրանք՝ նոյն ընկերութեան շահերի անունից գործողները, հանդիսանում են իբրև առաջնակարգ չարագործներ, հասարակութեան թշնամիներ: Մարդկային բախտերի, կեանքերի հետ նրանք խաղում են ամենացած, ամենաանարգ միտումներով և արդարադատութեան գործը դարձնում են անհատական ամենագարշելի շահերի յաջողութեան միջոց, պատճառ դառնալով այնքան աղէտների, այնքան դժբախտութեան:

Ինչ ասել կ'ուզի, որ ցանկացած տպաւորութեան համար Բրիտն խտացրել է պատկերի գոյները, գուցէ և ժամանակի ու տարածութեան մէջ սփռուած բնորոշ գծերը խնամքով հաւաքել է և ներկացրել որպէս մի մոմենտի արտայայտութիւն: Այդ բոլորը ընդունելով հանդերձ, պատկերը կը մնայ դարձեալ չափազանց մոայլ, չափազանց յուսահատական: Այստեղ կայ դատախազի օգնական Վագրէ, որ կ'ուզէր դատախազ դառնալ և կարմիր պատմութեան հագնել. կայ դատաստանական քննիչ Մուզոն, որ նոյնպէս ցանկութիւն ունի շուտով առաջ գնալ, դիրք ստեղծել: Հարկաւոր է մի աղմկալի գործ, ինչ գնով և լինի, չը կայ, կարելի է ստեղծել, հնարել: Եւ այդ գործը ճարուում է: Սպանւում է մի ծերունի, յանցագործներն անյայտ են, փոյթ չէ, բանտարկուում է մի անմեղ մարդ, մի բասկ, էչէպար անունով: Ինչո՞ւ էչէպարը և ոչ մի ուրիշը, դա միայն դիպուածի գործ է, սա է ձեռքի տակ ընկել յայտնի մոմենտում, երբ դատական պաշտօնեաներին հարկա-

ւոր էր մէկին ունենալ բանտում: Էջէպար ընտանքի հայր է, կին և երեխաներ ունի, անմեղ է, բայց դատաւորներին անհրաժեշտ է այդ դոճը որպէս մի պատուանդան, որի վրայ պիտի բարձրանան իրանք:

Եւ անա սկսում է մի զգուելի գործ: Այս անմեղ ու միամիտ մարդը պիտի պաշտպանուի դատաստանական քննիչի նենգաւոր հարցումներէր, որոնցով սա աշխատում է շփոթել իր գոհին և նրա չը գործած յանցանքը հաստատող բառեր, բացազանչութիւններ կորզել նրա շրթունքներից: Ճարպիկ, նենգաւոր քննիչին այդ հեշտ է յաջողում, էջէպար ժողովրդի մարդ է, հարցուփորձի բարդ ցանցի մէջ գլուխը կորցնում է:

Այս չէ բոլորը. քննիչին հարկաւոր է խոստովանութիւն ասել տալ նաև նրա կնոջը՝ Ժաննետտին: Հարցուփորձը տարւում է նոյն ձևով. կինը սիրում է ամուսնուն, գիտէ նրա անմեղութիւնը, բողոքում է ազգու շեշտով, հասկանալով դատաւորի բոլոր նենգութիւնը: Բայց քննիչը նրան ընկճելու զարհուրելի գէնք ունինա փորփրել և գտել է Ժաննետտի անցեալի մէջ մի խոշոր բիծ: Ժաննետտան նախ քան ամուսնանալը՝ աղախին եղած ժամանակ, փախել է իր տիրոջ որդու հետ, և նրանք միասին վառնել են 800 ֆր. սրա համար նա այն ժամանակ դատապարտուել է երեք ամսուայ բանտարկութեան: Այնուհետև խեղճ կինը ամուսնացել է, հաւատարիմ ամուսին և լաւ մայր է եղել, բայց քննիչը սպառնում է նրա ամուսնուն յայտնել այդ գաղտնիքը: Ժաննետտը սպառնալիքից շփոթուած այնպիսի պատասխաններ է տալիս, որոնք կարող են իր ամուսնու դէմ ծառայել:

Քննիչ Մուզոն իր նպատակին հասել է. նա ուզում էր, որ էջէպար յանցապարտ լինի, այժմ նա կարող է ասել, թէ՛ յանցապարտ է: Երդուեալների դատարանում հերթը դատախազի օգնական Վագրէին է, սրա մեղադրանքից է կախուած վճիռը. Վագրէն մեղադրում է անխնայ կերպով, այդ գործը նրան կարմիր պատմուճան է տուել արդէն, բայց իր ձուռի ընթացքում հասնում է մի վայրկեան, երբ նրա խիղճը չի կարողանում պարտկել այդքան զարշութիւն. յանցանքի ծանրութեան տակ նա՛ այդ խիղճը ըմբոստանում է և արդարութիւն պահանջում: Վագրէն ընկճւում է, նա հրաժարւում է մեղադրուելուց, և էջէպար արգարանում է:

Իսկպէս դրաման կարող էր այստեղ էլ վերջանալ. բայց հեղինակը կամեցել է ցոյց տալ, թէ ինչպէս դատական որևէ անարդարութիւն, անգամ եթէ նրա առաջն առնւում է, շատ անգամ պատճառ է դառնում բազմաթիւ դժբախտութիւնների: Էջէպարն աղատ է, բայց նա արդէն քայքայուած է սնտեսա-

պէս. այդ դեռ քիչ է, նա մի դժբախտ է բարոյապէս, քննիչը նրան յայտնել է իր կնոջ անցեալի գաղտնիքը, և նահապետական բարքերով մեծացած բասկը վճռում է մերժել իր կնոջը, իսպառ թողնել նրան և իր երկու երեխաների ու մօր հետ Ամերիկա անցնել: Խեղճ կինը ծնկաչոք աղերսում է իր ամուսնուն ներել, խղճալ ի սէր իրանց երեխաների, իրանց այնքան տարի երջանիկ կեանքի, իր հաւատարմութեան խստաբարոյ, դաժան բասկը մնում է անողոք: Մերժուած, անզաւակ, անտուն, անամուսին մնացած ժաննետտան էլ ոչինչ չ'ունի, բայց եթէ վրէժխնդիր լինել իր բոլոր կրածներէ համար, և նա դաշոյնի հարուածով սպանում է իր դժբախտութեան պատճառ եղող քննիչին՝ Մուզոնին:

Ահա այն պիեսը, որ բեմի վրայ տեղ-տեղ ձանձրալի է, ինչպէս դատաւորների իրար հետ ունեցած խօսակցութիւնները, տեղ-տեղ երկար, ինչպէս քննութեան տեսարանը, բայց վերջում ունի մի քանի շատ յուզիչ, ցնցող վայրկեաններ: Խոր և լաւ մտածուած դրամատիզմ կայ այն տեսարանի մէջ, երբ ժաննետտան ենթարկւում է հարցուփորձի, շատ ցնցող և օրիգինալ է նաև երկու ամուսինների վերջնականապէս բաժանուելու տեսարանը: Բայց ամբողջը, ինչպէս ասացինք՝ շնորհիւ շոշափուած խնդիրներին՝ խիստ հետաքրքիր է:

Այս պիեսայից ստացուած տպաւորութիւնը չափազանց վնասեցուցիչ է: Մարդի մէջ մեռնում է հաւատը դէպի մարդն ու մարդկային արդարագատութիւնը: Ճշմարտութիւն և արդարագատութիւն դառնում են լոկ բառեր և հնչւում են սառն, անողորմ հեգնութեամբ: Թւում է, թէ մարդի ոտքերի տակից հաստատուն յենակէտը խուսափում է, և դատարկութիւնն ու բարոյական ունայնութիւնը իշխում են չորս կողմում: Դարերի ընթացքում հաստատուած, տրագիցիաներով յղկուած ու սրբագործուած հաւատալիքները յոգնած, պառւած աստուածների պէս դառնում են իլլիւզիաներ և չքանում են սկիպտիցիզմի մատախուզի մէջ, կուռքերը խորտակւում են, և նրանց տեղ կանգուն է մնում միմիայն անհատը, որ իրաւունք ունի բացազանչել աշխարհի երեսին՝ «ինձանից դուրս» ես էլ ոչ ոքի և ոչինչի չեմ հաւատում»:

Խաղը՝ չը նայելով պիեսայի մի քանի բեմական անյարմարութիւններին՝ ծայրէիծայր լաւ անցաւ: Առանձնապէս աչքի ընկան տիկ. Սիրանոյշ ժաննետտայի և պ. Աբելեան էչէպարի դերում: Պ. Յարութիւնեան շատ լաւ քննիչ էր: Յաւում ենք, որ պ. Մամիկոնեան միանգամայն իր դերում չէր և նա երբէք այդքան թոյլ չէր խաղացել: Ամենապատեալ տեղը,

Երբ պէտք է արտայայտէր իր ներքին կռիւը, իր խղճմտանքի բողոքը, նա իսպառ փչացրեց: Յոյս ունենք, որ երիտասարդ դերասանը այսուհետեւ աւելի զգուշաւոր կը լինի դերերի ընտրութեան մէջ:

\*  
\*  
\*

Պոտապենկօն և Սերգիենկօն մի դրամա են գրել և աւուանել «Կեանք»: Մի փոքր անհամապատասխան անուն, նոյնիսկ անտեղի կերպով մեծահնչիւն, որովհետեւ այս դրաման պարունակում է կեանքի հասկացողութեան մի շատ չնչին, շատ աննշան մասը, նա բարձրացնում է իրականութիւնը ծածկող քօղի մի կտորը միայն: Բայց հեղինակներին հաճելի է եղել իրանց դրաման անուանել «Կեանք», երևի այն մտքով, որ սա մի մինիատիւրա է մեծ կեանքի. այստեղ էլ, ինչպէս միւսի մէջ, մարդիկ պայքարում են, տքնում, իրար խանգարում, մէկը ուրիշներին համար, միւսը միայն իր համար, նախանձը և չըկամութիւնը ցցում են իդէալի առաջխաղացութեան հանդէպ, ազնիւ մարտնչողը ընկնում է՝ մեծ գործը կտակելով յաջորդներին և այլն: Եւ այս փոքրիկ «Կեանք»-ի մէջ մի շարք լաւ բաներ են ասուած, ճշմարիտ է՝ ոչ շատ խորը և ոչ էլ ինքնատիպ իբրև նորութիւն, բայց էլի լաւ, համակրելի բաներ իշխող իրականութեան, ընդունուած կարգերի, տիրող սովորութիւնների մասին: Փոքրիկ, համակրելի տաղանդները կեանքի մեծ ճանապարհի վրայ անցորդներն յուշարարներն են գիտակից կամ անգիտակից վատութիւնների առաջն առնելու համար: Նրանք այնտեղ են, մինչև կը գան իրանցից աւելի կարողները, հօր ընտրեալները՝ հիմնաւորապէս մաքրելու համար դիզուած գարշութիւնները:

Ի՞նչ են ասում Պոտապենկօն և իր ընկերը այս նոր դրամայում: Իժիշկ Բելօզերով գիտութեան մարդ է, մի մաքուր իդէալիստ, նուիրուած ճշմարտութեան և արդարութեան յաղթանակին: Նրան սիրում են աշակերտները, յարգում են ուրիշները, նրա վրայ նախանձում են ընկեր բժիշկները, իսկ իր կիսը՝ Օլգա Պաւլովնա նրան բնաւ չի հասկանում, կենսասէր է և եսասէր, կ'ուզէր, որ իր ամուսինն ամբողջապէս իրան նուիրուած լինի, իր համար ապրի: Ահա մի միջավայր, որտեղ գիտութեան, իդէալի, ճշմարտութեան մարդը պէտք է գործի հեռաւոր յաղթանակի տենչով: Այս գեղեցիկ գործի մէջ նրան աջակից և գաղափարակից է իր օգնական երիտասարդ բժիշկ Սինիցին:

Բելօգերով հակառակ իր թշնամի բժիշկների չարամիտ խորհուրդներին՝ միայն իր օգնականի աջակցութեամբ կատարում է մի յանդուգն օպերացիա: Յաջողութիւնը կատարեալ է, նա գիտութեանը մատուցել է մեծ ծառայութիւն: Նրա կատարած գիտական փորձը բացել է մեծ, լայն հորիզոններ մտքի առաջ: Ինչ աւելի գեղեցիկ գործ. բայց ահա միջավայրը իրար է գալիս, շարժում: Ճշմարիտ է՝ իր աշակերտները երջանիկ են, նրան ողջունում են ցնծութեամբ, իր ծեր ուսուցիչը նրան երկինք է բարձրացնում, բայց այնտեղ, աւելի հեռուն փողոցը, դուրսը կայ, ուր ետում են այնքան ստոր կրքեր թունաւոր օձերի պէս. իր ընկերակիցները, դարձեալ գիտութեան մարդիկ՝ նախանձից կուրացած՝ բոլոր ուժով աշխատում են նսեմացնել ճշմարտութեան զինւորի փառքը. և երբ ոչինչ չի օգնում, նրանք սուտ լուրերով արատաւորում են Բելօգերովի ընտանեկան պատիւը: Գիտութեան լոյսի առաջ անգոր գտնուած չարախօսները յաղթանակում են, երբ մի կնոջ պատիւ է հրապարակ նետում: Մի կին անարգելու համար հասարակական կարծիքը միշտ պատրաստ է և նոյնիսկ ուրախ: Մի վայրենի հաճոյք կայ կնոջ եղած կամ չեղած անպատուութիւնը ականջից ականջ փսփսայու համար: Քաղաքակիրթ, թէ կիսակիրթ հասարակութիւնները այդ բանում իրարից յետ չեն մնայ: Զոհերը անթիւ են: Այս անգամ զոհ է գնում մարդկութեան մի բարերար, մի ազնիւ մարդ՝ Բելօգերով: Տեղական թերթում տպւում են մութ, բայց հասկանալի ակնարկներ, թէ նրա կինը բաժանում է իր սէրը մի ոմն Բատիչևի հետ: Եւ գիտութեան մարդը՝ որ իր ամբողջ կեանքում կուել է նախապաշարմունքների դէմ, ստիպուած է յանձն առնել նախապաշարմունքներից ամենալատը՝ պատուի արատը զէնքով, արիւնով մաքրելու վայրենի սովորութիւնը: Նա մենամարտութեան է դուրս գալիս Բատիչևի դէմ որին վիրաւորել է վրդովմունքի մի վայրկեանում, և սպանւում:

Իսկապէս այս դրամայի վերջին մասը, ուր հասարակական կարծիքի, ընդունած սովորութեան բեռի տակ ընկճուող մարդը գնում է անելու այն, ինչ միանգամայն հակառակ է իր տեսական հասկացողութիւններին, շատ աւելի օրիգինալ և ուշագրաւ է, քան առաջին մասը: Մի զարհուրելի, մի համարեալ դիւթական, անտեսանելի օղակ է որոշ ժամանակում իշխող հասարակական հասկացողութիւնների ամբողջութիւնը, որ ճշնշում, սղոմում, խեղդում է անհատական կեանքն իր շատ անգամ ամենալաւ գաղափարներով: Դա մի բռնութիւն է, որ շատ աւելի ծանր, շատ աւելի տեղական է լինում, քան քաղաքական ամենաբիրտ բռնութիւնները, և որի տակ անհատները

ոչ ոք, համարեան ոչ ոք չի ապրում իր ինքնուրոյն կեանքով, իր բանականութեան, ճաշակին, հասկացողութիւններին համապատասխան եղանակով: Սովորութիւնների, ամուր, բայց հին հասկացողութիւնների կապանքների մէջ՝ մարդիկ շարժուում են ինչպէս մի հօտ, ինչպէս ստրուկներ թաղմութիւն, և արտասուելին այն է, որ իրանք իրանց հաւատացնում են, թէ ազատ են, գործում են, ապրում են ազատօրէն: Մի փոքրիկ անալիզ սեփական արարքների—և ահա բացւում է մի կատարեալ, մի խղճալի ոչնչութիւն: Իրական կեանքը, նա, որ իսկական արտայայտութիւն է մարդկային բնոյթին, նրա ֆիզիկական-բարոյական խառնուածքին, համարեա միշտ ծածկուած է մի քօղով, որ կարլայլ իրաւացի կերպով անուանուած է «Մեծ Լոռութիւն»: Կեանքն այդ Լոռութիւնն է, որի խաղաղութիւնը ոչ ոք չի համարձակուում վրդովել:

Մտածել են Պոտապենկօն և իր ընկերը այս թագնուած կեանքի մասին, մեծ լուռութեան մէջ ցաւազինօրէն գալարուող խորհուրդների մասին—չը գիտեմ, բայց նրանց դրաման, ուրիշներին գոնէ, այդ զգալ է տալիս, շնորհակալ լինենք և դրա համար:

Ահա այն պիեսան, որ խաղացուեց նոյեմբերի 6-ին: Պ. Պետրոսեանին այս անգամ տեսանք իր իսկական դերում: Նա գեղեցիկ կերպով կատարեց բժիշկ Բիլօզերովի պատասխանատու դերը. առանձնապէս գրաւիչ էր նրա այն անձնավատահ և մի փոքր յոգնած ժեստը, որով նա հրաւիրում էր ընկերներին անձամբ ստուգել յաջող օպերացիայի հետեանքը: Ափսոս որ հեղինակները այդ գեղեցիկ դերը ծանրաբեռնել էին մի աւելորդ տեսարանով, դա վիրաւոր բժշկի բեմի վրայ մեռնելն է: Վիրաւորին կամ մեռածին բեմ բերելը մեծաւ մասամբ այն-յաջող միտք է բեմական էֆֆեկտի տեսակէտից:

Տիկին Սիրանոյշ իր տաղանդի լայնութեանը համապասխան դեր չ'ունեցաւ այդ երեկոյ, Բիլօզերովի կինը՝ Օլգան խոշոր դէմք չէր պիեսայի մէջ: Տիկին Մայսուրեանի դերը (Օլգայի քոյրը) միանգամայն աւելորդ տեղ էր բռնում դրամայի մէջ և բնականապէս անցաւ աննկատելի:

Պ. Ալիխանեանին կարելի է շնորհաւորել իր կատարեալ յաջողութեան համար Սինիցինի դերում: Էլի մի նոր ապացոյց, թէ որքան շատ բան է կախուած դերերի համապատասխան բաշխումից: Ամբողջը լաւ անցաւ:

\*  
\*\*

Նոյեմբերի 10-ին խաղացուեց մի հայերէն ինքնուրոյն պիեսա, պ. Ա. Արեւեանի «Մարուող ձրագներ»-ը, երեք արարուածով:

Այս դրամայի նիւթը վերցրուած է հայ արհեստաւոր, աշխատաւոր շրջանից: Մերունի Յակոբը մի աղքատացած արհեստաւոր է, որ իր կեանքի վերջալուսին գտնուում է ամենաժանր կարիքի մէջ, և որ մխիթարուում է աղօթքով և սուրբ ընթերցուածքներով. նրա պառաւ կինը ստիպուած է ուրիշներին կար անել. մի որդին՝ Ներսէսը թոքախտով հիւանդ, աշխատում է մի ծխախոտի գործարանում և շարունակ հազում է ու մաշուում: Միւս որդին Սերոբը՝ առողջ է, բայց աշխատել չի ուզում, նա մի թափառաշրջիկ է, ապրում է՝ ինչպէս որ կարող է, և անում է՝ ինչ որ կարող է: Նա մի ըմբոստ է կեանքի դժուարութիւնները՝ հեղինակի կարծիքով՝ նաև անարդարութիւնների դէմ: Նա մերթ քաղցած է, մերթ կուշտ, բայց միշտ կատաղի, միշտ գրգռուած և յաճախ փիլիսոփայ: Այդ փիլիսոփայութիւնը սակայն չի արգելում նրան նաև հայրենական տան ջնջին, բայց ամենամանրաժեշտ իրերը գողանալ և վաճառել:

Վարպետ Յակոբն ունի նաև մի աղջիկ՝ Մարթա, նահապետական բարքերով մտուած, որ խեղճ ընտանիքի սիրելին է և մխիթարութիւնը: Ահա այս անմեղ աղջիկը գոհ է գնում հարուստ հարևանի որդու Ալեքսանդրի խաբէութիւններին, որ սիրոյ և ամուսնութեան պատրուակով նրան գայթակղեցնում և ձգում է: Հրապարակ է գալիս սափրիչ Մինասը, որ ժողովրդական բժիշկ է նաև, և մեծահոգի կերպով ազատում է Մարթային խայտառակութիւնից՝ ամուսնանալով նրա հետ: Այսքանով բաւական են ընտանիքի անդամները, նրանք գոհ են, որ իրանց տան պատուի արատը այսպիսով ծածկուում է: Բայց այդպէս չի մտածում Սերոբը, նա էլ գոհ է, որ քոյրն ամուսնանում է սափրիչի հետ, բայց գտնում է, որ այնուամենայնիւ հարևանի որդին մի հատուցում է պարտական, և սպանում է նրան:

Ահա պիեսայի նիւթը, որ հեղինակը կարողացել է, չը նայելով մի շարք խոշոր թերութիւններին, դրամատիկական, տեղ-տեղ յուզիչ և ընդհանրապէս հետաքրքիր դարձնել: Այնուամենայնիւ այդ դրաման մի քանի էական փոփոխութիւնների կարօտ է: Վարպետ Յակոբի կրօնական երկիւղածութիւնը, ընթերցուածքներն ու աղօթքները չափազանցացրուած են: Սերոբը, որ ինչպէս երևում է՝ հեղինակի սիրած տիպն է, մի շարք հակասութիւններ է ներկայացնում: Նախ նրա փիլիսոփայու-

Թիւնները անհամապատասխան են իր հասկացողութեան. յետոյ հասարակական անարդարութիւնների դէմ ըմբոստ, իբրև ազնիւ սիրտ ունեցող, նա չի ճնշում սակայն իր ծերունի հօրը համարեա հարուածել և աղքատ, խղճալի տունը կողոպտել: Նա իսկապէս մի շարլատան է, որից հեղինակը անօգուտ տեղը փորձում է մի մորալիտ ստեղծել: Հիմնովին սխալ է սափրիչ Մինասին յատկացրած դերը, հեղինակը միանգամայն թիւրիմացութեան մէջ է: Ժողովրդական դալլաք-բժիշկները մեծաւ մասամբ խորամանկ, խաբեբայ, շահախնդիր արարածներ են: Այդպիսի մարդիկ չէին կարող այն աստիճան անշահախնդրութիւն ցոյց տալ, որ իբր թէ բժշկէին ձրիապէս: Եւ յետոյ՝ ամենից տարօրինակը—այդ սափրիչ՝ Մինասը վեհանձնօրէն յանձն է առնում ամուսնանալ Մարթայի հետ նրա խայտառակութիւնը ծածկելու, նրա հոգին փրկելու համար: Դա անկարելի է, երբէք մի ժողովրդի մարդ, մի սափրիչ՝ գաղափարի, պատուի հասկացողութեան այդ բարձրութեան համեմել չէր կարող: Աւելի ճիշտ, աւելի հասկանալի կը լինէր, եթէ հեղինակը նրա տեղ դրած լինէր մի ուսուցիչ, որոնցից մի ժամանակ քիչ չը կային մեր գիւղերում և քաղաքներում. թէ չէ մի սափրիչ-բժիշկ... Լաւ է և ճիշտ է ըմբռնուած պարզ, ամօթխած, միամիտ և խաբուող Մարթայի տիպը: Բոլորովին իրական է և Սերորի վրէժխնդիր լինելու ցանկութիւնը. որչափ և ընկած լինէր նա, այդ Սերորը, քրոջ պատուի համար մահ էլ յանձն կ'առնէր: Վատ չէ նաև Ներսէսը, աշխատաւոր, հիւանդոտ երիտասարդը:

Յուսով ենք, որ հեղինակը կը կարողանայ թերութիւնները ուղղել և այս գործը հայ բեմի վրայ պահել:

Սաղը լաւ անցաւ:

\*  
\*\*

Նոյեմբերի 13-ին խաղացուած «Բազէներ և Ագուաներ»-ի (հեղ. Սումբատովի) մասին երկարօրէն խօսուած է «Մուրճ»-ում անցեալ տարի:

Ա.

## II Արաքսեանի ժողովրդական թատրոնը Հալաբարում

Հալաբարի այժմեան ժողովրդական թատրոնը, որ գլուխ է եկել պ. Արաքսեանի եռանդուն ջանքերով, Թիֆլիզում միակն է՝ կարելի է ասել իր տեսակի մէջ: Իբրև ժողովրդական թա-